2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար կառավարության որոշումներով բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ 2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 689.6 մլրդ դրամ՝ 81.5%-ով ապահովելով ՀՀ կառավարության տարեկան ծրագիրը: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 719 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ՀՀ կառավարության տարեկան ծրագրի 76.2% կատարողական: Ծախսերի համեմատաբար ցածր կատարողականը պայմանավորված է որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ: Առանց արտաբյուջետային միջոցների եկամուտները կազմել են 673.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 705 մլրդ դրամ:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 9.8%-ով կամ ավելի քան 61.3 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի, տուրքերի ու պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև պաշտոնական դրամաշնորհների հաշվին:

Պետական բյուջեի եկամուտների 93.1%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5%-ը՝ այլ

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

եկամուտների, 1.8%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 15.8 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրված մուտքերի 76.2%-ը:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 540.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որից ավելի քան 1.2 մլրդ դրամը կազմել են արտաբյուջետային հաշիվներին մուտքագրված հարկային եկամուտները: Առանց արտաբյուջետային մուտքերի պետական բյուջեի հարկերի ու տուրքերի տարեկան ծրագրի կատարողականը կազմում է 82.6%, իսկ դրանք հաշվի առած՝ 82.5% (արտաբյուջետային հաշիվներին մուտքագրված հարկային եկամուտների կատարողականը կազմել է 53.2%): 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկերն ու տուրքերն աճել են 9.9%-ով կամ 48.6 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, եկամտահարկի և մաքսատուրքի աճով:

Հարկերի և տուրքերի 50%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 270.3 մլրդ դրամ և 8.2%-ով կամ 20.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 171.5 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 98.7 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 31.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 21.7 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 9.6 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 15.5%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 83.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 29%-ով կամ 18.8 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 66 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 8.7%-ով կամ 5.3 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են շուրջ 29.8 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 5.5%-ը և 18.2%-ով կամ 4.6 մլրդ դրամով գերազանցել 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 17.9 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով տարեկան ծրագրի 82.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 11.4%-ով կամ 1.8 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 17.4 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.2%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 6.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 10.4 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 32.2%-ով կամ 2.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, օգտակար հանածոների արդյունահանման և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 13.3 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 5.3 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 2.7 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.6 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 901.4 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 870 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 419.7 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 289 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 41.9 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 1.2 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 26.9%-ով

կամ 2.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 102.3 մլրդ դրամ՝ 82.9%-ով ապահովելով տարեկան կանխատեսված ցուցանիշը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 12.1%-ով կամ 11 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 12.5 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրով նախատեսվածի 45.5%-ը: Նշված գումարից 11.3 մլրդ դրամը ստացվել է Եվրամիության աջակցության շրջանակներում: Շուրջ 1.2 մլրդ դրամ է մուտքագրվել պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ կազմելով ծրագրով նախատեսվածի 84.2%-ը, առանց որի պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմում է 43.4%: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ստացված դրամաշնորհներն աճել են 2.1 անգամ կամ շուրջ 6.6 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 34.8 մլրդ դրամ՝ 86.9%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից 13.4 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց ծրագիրը կատարվել է 78.6%-ով: Առանց վերջիններիս այլ եկամուտների հունվար-հոկտեմբերի փաստացի ցուցանիշի գծով արձանագրվել է տարեկան ծրագրի 93% կատարողական: Այլ եկամուտների ծրագրի նշված բարձր կատարողականը հիմնականում ապահովվել է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի հաշվին, որոնք գերազանցել են տարեկան ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 15.1, 46.9 և 60.1 տոկոսով: Ի տարբերություն նշված եկամտատեսակների՝ ցածր կատարողական է գրանցվել տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական

միջոցներից մուտքերի գծով, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 30.4%-ով, առանց արտաբյուջետային միջոցների՝ 65.2%-ով: Հաշվետու ժամանակահատվածում 4.9 մլրդ դրամ է մուտքագրվել իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ կազմելով տարեկան ծրագրով կանխատեսված ցուցանիշի 78.2%-ը, առանց արտաբյուջետային միջոցների՝ 87.8%-ը, իսկ ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների գծով մուտքագրվել է շուրջ 437.6 մլն դրամ կամ տարեկան ծրագրով կանխատեսված ցուցանիշի 59%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 12.3%-ով կամ 4.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների նվազմամբ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջեի ծախսերն աճել են 7.4%-ով կամ 49.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, հիմնական միջոցների գծով ծախսերի, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, պետական պարտքի սպասարկման, դրամաշնորհների և այլ ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 639.5 մլրդ դրամ՝ 76.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7%-ով կամ 41.7 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 60.6 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, շուրջ 4.3 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են տարեկան ծրագրի համապատասխանաբար 77.2%-ը և 70.7%-ը: Նախորդ տարվա հունվար-հոկտեմբեր ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 7.4%-ով և 5.3%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է շուրջ 130.9 մլրդ դրամ, որը կազմել է տարեկան ծրագրի 74.6%-ը և 5.3%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 29.6 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 69.8%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 19.6 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 9.9 մլրդ

դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 28.8%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին: Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ միջին և երկարաժամկետ առումներով դրամական շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 15.1 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով տարեկան ծրագրի 79.5%-ը և 4.5%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Շուրջ 79.1 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 77.6 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 1.3 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպություններին և 179 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 27 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին: Դրամաշնորհների տարեկան ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 83.7%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.7%-ով:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջեի ծախսերի 29.4%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 211.6 մլրդ դրամ՝ 79%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 5.2%-ով կամ 10.5 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ նշված գումարից 156.9 մլրդ դրամ (81.9%) են կազմել կենսաթոշակները, 54.7 մլրդ դրամ (71.7%)՝ նպաստները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 108.3 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով տարեկան ծրագրի 70.3%-ը և 7.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում կազմել են 79.6 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 75.4%-ը: Մասնավորապես՝ 81 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 74.7%-ով: Շուրջ 1.5 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ

ֆինանսական ակտիվների օտարումից՝ կազմելով տարեկան ծրագրի 48.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 10.9%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների վրա կատարված ծախսերի աճով:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է շուրջ 29.4 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով տարեկան ծրագրով նախատեսված 97.7 մլրդ դրամի ընդամենը 30.1%-ը: Նշենք, որ նշված ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ տարեկան ծրագրով նախատեսված պետական բյուջեի ազատ միջոցներից 62.6 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն օգտագործվել է ընդամենը 17.6 մլրդ դրամ: Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի ներքին ֆինանսավորումը կազմել է 35.7 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ -6.4 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 23.7 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցները, 12 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները: Մասնավորապես՝ 24.6 մլրդ դրամ է ստացվել գանձապետական պարտատոմսերից՝ կազմելով տարեկան ծրագրի 82.1%-ը: Մուրհակների մարման նպատակով ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 89.2%-ով՝ կազմելով 166.1 մլն դրամ: 716 մլն դրամ է հատկացվել «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարման նպատակով, որը կազմել է ծրագրով նախատեսված ցուցանիշի 50%-ը: Անցած ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 11.4 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով տարեկան ծրագրի 92.3%-ը: Նշված գումարից շուրջ 11.3 մլրդ դրամը տրամադրվել է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից, որից 7.5 մլրդ դրամը՝ գյուղատնտեսական վարկերի տրամադրման նպատակով, շուրջ 1.8 մլրդ դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 1 մլրդ դրամը՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով՝ «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակներում, 936.7 մլն դրամը՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց և 50.6

մլն դրամ՝ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին: Տեղական կենսապարարտանյութերի արտադրությունը խթանելու նպատակով անցած ժամանակահատվածում 50 մլն դրամ է տրամադրվել «ՍԻՍ-95» ՍՊԸ-ին: Շուրջ 91.8 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով:

2011 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում 5.8 մլրդ դրամ է ստացվել նախկինում տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ կազմելով տարեկան ծրագրի 70.4%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 30.1 մլն դրամ է տրամադրվել բաժնետոմսերում և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով, որը կատարվել է տարեկան ծրագրի 23.1%-ի չափով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -6.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ արտաքին աղբյուրներից ներգրավվել են 25 մլրդ դրամի զուտ փոխառու միջոցներ, -31.4 մլրդ դրամ է կազմել ֆինանսական ակտիվների ցուցանիշը: Հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են շուրջ 33 մլրդ դրամի վարկային միջոցներ: Ավելի քան 7.9 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 5.3 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: 1.1 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 618.5 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 310.9 մլն դրամ՝ ԳԶՄՀ-ի, 248.1 մլն դրամ՝ ՎԶԵԲ-ի, 59.7 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 46.1 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 250.3 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

2011 թվականի հունվար- հոկտեմբեր ամիսներին ԼՂՀ-ին տրամադրվել է շուրջ 30.6 մլրդ դրամ միջպետական վարկ՝ ապահովելով տարեկան ծրագրով նախատեսված հատկացումների 86.4%-ը: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 248.3 մլն դրամի վճարում՝ կազմելով տարեկան ծրագրի 96.8%-ը: Ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար

ամսին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 799.4 մլն դրամ՝ կազմելով տարեկան ծրագրի 87.8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 317.8 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: